

մանը եւ Սէքլէրներու Պիսթրից քաղաքն հաստատուեցան: Հոս Միքայէլ Ա Աբաֆի իշխանն (1661—1686) զիրենք ընդունեցաւ՝ երբ իրենք իրենց Մինաս եպիսկոպոսին հետ խոստացան լատին եկեղեցւոյ միութեան մէջ մտնել¹²¹: Սակայն իրենց իրական եւ վերջնական միութիւնն եղաւ Աքսէնտ Վէրզիրէվաքի հայ քահանային ձեռօք, որ յատկապէս այս նպատակաւ Թրանսիլվանիա եկաւ, եւ համոզեց իւր այս ազգակիցներն որ չռոմայ հետ միանան, եւ իրենց Մինաս եպիսկոպոսը Վեմպերկ երթայ հոն հրապարակաւ դաւանութիւն տալու համար: Մինաս 1686ին¹²² Վեմպերկ գնաց, եւ Բալլավիչինի Կարդինալին եւ հայկաթողիկեայ Վարդան Աբբեպիսկոպոսին¹²³ առջեւ († 1715)¹²⁴ դաւանեցաւ լատին եկեղեցւոյ հաւատքն, եւ խոստացաւ նաեւ իւր ազգակիցները ապահովապէս համոզել նոյնն ընելու¹²⁵:

Թրանսիլվանիոյ այս առաջին հայկաթողիկեայ եպիսկոպոսն Մինաս՝ առաւ Պուղտանաց եւ Մոլտաւիոյ եպիսկոպոսի տիտղոսն, բայց չկըրցաւ երկայն ատեն վայելել, վասն զի նոյն տարին՝ 1686ին Վեմպերկի մէջ վախճանեցաւ*: Յամին 1687 Փետր. 13ին՝ Եղիա Մէնտրուլ հայ աւագերիցուն խնդրանօք Վեմպերկի հայ կաթողիկեայ արքեպիսկոպոսն՝ Վարդան Յունանեան նոյն միաբանասէր Աքսէնտ Վէրզիրէվաքի քահանան Թրանսիլվանիոյ Հայոց եպիսկոպոսական փոխա-

* Ոչ ի Վեմպերկ, այլ Հունգարիոյ լերանց մէջ վախճանեցաւ իւր քաղաքը դառնալու ժամանակ: Ստեփ. Ռոշքա, Ժմտկգր. յամին 1686: Ծ. Թ.